# Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով
# AM09/ENP-PCA/TP/04

## Տեղեկագիր 2: Հունիս – Հոկտեմբեր 2011

Սույն տեղեկագիրը ԵՄ Թվինինգ ծրագրի երկրորդ տեղեկագիրն է՝ <<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով>>: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը այժմ գտնվում է իրականացման իններորդ ամսվա ավարտի փուլում և ծրագրի յուրաքանչյուր վեց բաղադրիչների շրջանակներում արդեն իսկ իրականացվել են երկու կամ երեք գործունեություններ (առաքելություններ, ուսուցողական այցելություններ): Տեղեկագրի սույն տարբերակը ներկայացնում է ծրագրի գործողությունների ամփոփ նկարագիրը 2011 թվականի հունիս-հոկտեմբեր ժամանակահատվածի համար:

**Վերստուգող Հանձնաժողովի հանդիպումները**

Ծրագրի Վերստուգող Հանձնաժողովը հանդիպումներ է ունենում յուրաքանչյուր եռամսյակը մեկ՝ քննարկելու համար ծրագրի առաջընթացը և ծրագրի հնարավոր խնդիրները կամ խոչընդոտները: Պաշտոնապես, Վերստուգող Հանձնաժողովը բաղկացած է երկու Ծրագրի ղեկավարներից՝ պրն. Մնացականյանը և պրն. Թյուգեսենը, ԹՄԽ և ԹՄԽ գործընկերը, և Ծրագրերի Կառավարման Գործակալությունը: ՀՀ-ում ԵՄ պատվիրակությունը սովորաբար ունենում է երեք դիտորդներ, որոնք ներկա են գտնվում այս հանդիպումների ժամանակ, ինչպես նաև որպես կանոն ներկա են գտնվում ՀՀ ԱՎԾ-ի Թվինինգի բաղադրիչի ղեկավարները: Ավելին, արտաքին շահառուները կամ Եվրոստատի ներկայացուցիչները կարող են նույնպես հրավիրվել այդ հանդիպումների ժամանակ, սակայն դեռևս նման դեպք չի եղել:

Մինչ այժմ կայացել են Վերստուգող Հանձնաժողովի երեք հանդիպումներ, որոնցից վերջինը տեղի է ունեցել սեպտեմբերի վերջին: Ծրագրի ընթացքը ընդհանուր առմամբ համարվում է հուսալի: Որոշակի հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի հետ համագործակցությանը (բաղադրիչ Բ), ինչպես նաև Գյուղատնտեսության համատարած հաշվառման (բաղադրիչ Դ) և ՏՀՏ օգտագործման հետազոտության (բաղադրիչ Զ) պլանավորման և ֆինանսավորման հարցերին: Բացի այդ, հաշվի առնելով հարցի համընդհանուր կարևորությունը Հայաստանի համար, որոշակի մանրամասնություններով քննարկվել է նաև բնակչության մարդահամարը, որը կայանալու է ս.թ. հոկտեմբերի 12-21 –ը:

**Բաղադրիչ Ա. Որակի կառավարում**

Ներկայումս աշխատանքը կենտրոնացված է այսպես կոչված *որակի հռչակագրերի* պատրաստման վրա ՀՀ ԱՎԾ-ի մոտավորապես 130 արտադրանքների վերաբերյալ: Օգտագործելով ստանդարտ ձևանմուշը, այս որակի հռչակագրերը, որպես մեթատվյալներ որոնք պարունակում են հիմնական սահմանումներ, մեթոդաբանություն և այլն, կարևոր գործիք են հանդիսանալու վիճակագրության սպառողների համար, որը նրանց հնարավորություն կտա հասկանալու և տարբերակելու տարբեր վիճակագրությունների նպատակները և կիրառումը: Նախատեսված է, որ յուրաքանչյուր եռամսյակում մոտավորապես 30 որակի հռչակագրեր պետք է արտադրվեն և տեղադրվեն ՀՀ ԱՎԾ-ի ինտերնետային կայքում շարունակաբար՝ ըստ առկայության: Ներկայումս ուշադրության ենթակա մեկ այլ հարցերից է ՀՀ ԱՎԾ-ի տվյալների տարածումը սպառողի համար առավել մատչելի կիրառելի եղանակով և ձևաչափով փոխարինելը: Դիտարկվում են հատուկ տարածման գործիքներ, և նման համակարգի հնարավոր ստեղծումը և կիրառումը կարելի է իրականացնել 2012 թվականի առաջին կեսին:

**Բաղադրիչ Բ. Բիզնես Վիճակագրություն**

Բիզնես վիճակագրության հետազոտությունների վերաբերյալ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը չափելու համար ստեղծվել է բազիսային սահմանում՝ 7 տարբեր հետազոտություններից ընտրելով ներկայացուցչական ձեռնարկություններ և վերջիններիս շրջանում հարցում իրականացնելով, թե որքան ժամանակ է նրանցից պահանջվում ներկայումս կիրառվող հաշվետվական ձևերը լրացնելու համար: Այժմ ընթանում են հաշվետվական ձևերի վերլուծությունները՝ կապված հարցերի հնարավոր համախմբման, հարցաշարից ավելորդ հարցերի վերացման, ինչպես նաև զուտ նախագծման հետ կապված հարցերի վերաբերյալ: Նախատեսվում է մշակել նոր հաշվետվական ձևեր և փորձարկել դրանք 2012 թվականի առաջին կեսին՝ ներառյալ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման նոր ձևաչափը: Վերանայված հաշվետվական ձևերի վերջնական տարբերակները պետք է գործարկման դրվեն 2012 թվականի վերջին և 2013 թվականի սկզբերին: Զուգահեռաբար մշակվում է ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական բիզնես ռեգիստրը: Ընդլայնված ընդգրկումը նախատեսվում է ՀՀ ԱՎԾ-ի և Կենտրոնական բանկի համագործակցության շրջանակներում և պատրաստվում են հնարավոր առաջիկա արդիականացման հնարավորությունները՝ հիմնականում ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի հետ համագործակցության ընդլայնման միջոցով և ՀՀ պետական սեկտորում NACE դասակարգչի ընդհանուր կիրառմամբ:

**Բաղադրիչ Գ. Ազգային հաշիվներ՝ ՀՆԱ-ի ամբողջականության բարելավում**

*Աղյուսակային մոտեցման* առաջին աղյուսակները արդեն լրացվել են: Այս սկզբնական աղյուսակները ստեղծում են այն ընդհանուր նկարագիրը համաձայն որի պետք է համակարգված կերպով իրականացվի մնացած աղյուսակների լրացումը: Աղյուսակային մոտեցումը տալիս է ազգային հաշիվների տարբեր բաժինների վերաբերյալ ընտրված մեթոդաբանությունների ընդհանուր նկարագիրը, և այդպիսով նաև օգնում է ապահովելու, որպեսզի տնտեսության բոլոր ճյուղերը պատշաճ ընդգրկված լինեն ազգային հաշիվներում: Սույն բաղադրիչի առաջին առաքելությունների ընթացքում նաև ժամանակ է հատկացվել մշակելու վերանայման քաղաքականությունը և վերանայման ռազմավարությունը՝ հաշվի առնելով ազգային հաշիվների կենտրոնական և համակարգող դերը սերտորեն կապված վիճակագրության մեջ, ինչպիսիք են պետական ֆինանսները և վճարային հաշվեկշիռը:

**Բաղադրիչ Դ. Գյուղատնտեսության համատարած հաշվառում**

Թվինինգ ծրագրի ընթացքում պետք է պլանավորվի Հայաստանի Գյուղատնտեսության համատարած հաշվառումը: Գյուղատնտեսության համատարած հաշվառումը, ինչպես և բնակչության մարդահամարը, հսկայական մեծ աշխատանք է, որը ներառում է մասնավորապես ՀՀ ԱՎԾ-ի տարածքային գրասենյակները, որտեղից և պետք է կազմակերպվի տվյալների հիմնական հավաքագրումը: Այս գործընթացը սկսելու համար սույն թվականի սեպտեմբերի 23-24 կազմակերպվել էր վերապատրաստման սեմինար Սևան քաղաքի Չկալովկա գյուղում, որտեղ ներկա էին ներկայացուցիչներ ՀՀ ԱՎԾ-ի բոլոր տարածքային գրասենյակներից *(տես՝ խմբակային աշխատանքի լուսանկարը)*:

Սեմինարին մասնակցում էր նաև ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի ներկայացուցիչը, որի հետ ՀՀ ԱՎԾ –ն և Թվինինգ ծրագիրը աշխատում են համատեղ: Մինչ այս սեմինարը, զգալի աշխատանքներ են իրականացվել սույն բաղադրիչի երկու գործունեությունների շրջանակներում, հիմնականում կենտրոնանալով հարցաթերթիկների վրա, որոնք պետք է օգտագործվեն գյուղատնտեսության համատարած հաշվառման ընթացքում, ինչպես նաև այն բոլոր սահմանումների

վրա, որոնք պետք է համապատասխանեն ԵՄ կանոնակարգին: Նաև աշխատանք է սկսվել գյուղատնտեսության համատարած հաշվառման բյուջեյի և կազմակերպման հարցերի շուրջ: Ֆինանսավորման հարցերը դեռևս լուծված չեն, սակայն ՀՀ ԱՎԾ/Թվինինգ ծրագիրը կհամագործակցեն ԱՄՆ գյուղդեպարտամենտի ներկայացուցիչների հետ միասին՝ հարցը բարձրացնելով 2011 թվականի նոյեմբեր ամսին բարձրաստիճան ատյանների հետ կայանալիք քաղաքական հանդիպման ժամանակ:

**Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս (ՀՍԳԻ)**

Իրականացվել են ներկայիս ազգային սպառողական գների ինդեքսի վերլուծություններ՝ ՀՍԳԻ հետ անմիջական համեմատությամբ և որոշվել է անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվությունը: Քննարկվել են աշխատանքային գործընթացներում փոփոխություններ կատարելու առաջարկությունները, որպեսզի հնարավոր լինի իրականացնել անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքներ, հատկապես այն հարցերում, որոնք վերաբերվում են գների հավաքագրմանը: Նախ և առաջ քննարկվեցին ամսեկան երեքական գնադիտարկումների փոխարեն երկուական գնադիտարկումներ իրականացնելու հնարավորությունները ապրանքների մեծ մասի համար (ապրանքներ և ծառայություններ), հիմնականում առաջնորդվելով այն չափանիշով, որ ներկայիս ՍԳԻ որակը չպետք է վնաս կրի այդ փոփոխությունից: Բացի այդ, աշխատանքը կենտրոնացավ նաև այլ հարցերի վրա, օրինակ՝ թե ինչպես կարելի է իրականացնել դիտարկված ապրանքների որակի փոփոխության ճշգրտումները:

**Բաղադրիչ Զ. ՏՀՏ վիճակագրություն**

Սույն բաղադրիչի շրջանակներում, օգոստոս ամսին իրականացվեց առաջին ուսուցողական այցելությունը Դանիայի վիճակագրական ծառայություն: Կոպենհագենում ժամանակը մասամբ հատկացված էր ՀՀ ԱՎԾ-ի կողմից Հայաստանի ձեռնարկություններում իրականացվելիք ՏՀՏ օգտագործման հետազոտության մեթոդաբանության և հարցաշարի հետագա քննարկումներին, որպես սույն բաղադրիչի շրջանակներում առաջին գործունեության անմիջական շարունակություն, և մասամբ էլ Դանիայի ՏՀՏ վիճակագրական համակարգի ընդլայնված ներկայացմանը և դրան առնչվող հարցերին, ինչպիսիք են բիզնես ռեգիստրը, տվյալների հավաքագրման և տարածման հարցերը: Վերստուգող հանձնաժողովի հանդիպման քննարկումներից հետո որոշվեց, որ Թվինինգ ծրագրի շրջանակներում պետք է իրականացվի ՏՀՏ օգտագործման փորձնական ուսումնասիրություն ոչ միայն ձեռնարկություններում, այլ նաև նմանատիպ ուսումնասիրություններ իրականացվեն կառավարության և պետական սեկտորում: Երկու ուսումնասիրություններն էլ, ներառյալ ՏՀՏ վիճակագրության ԵՄ մեթոդաբանության մշակումը, կիրականացվեն 2012 թվականի ընթացքում:

**Ինչպես կարելի է ստանալ առավել շատ տեղեկություններ**

Ծրագրի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները, ինչպես նաև ծրագրային գործունեությունների (առաքելությունների) զեկույցները կարելի է գտնել ՀՀ ԱՎԾ-ի կայք էջում www.armstat.am/en/?nid=383, ինչպես նաև Դանիայի վիճակագրական ծառայության կայք էջում www.dst.dk/armenia. Դուք կարող եք նաև ուղղակի կապ հաստատել ծրագրի ադմինիստրացիայի/կառավարման հետ.

Թոմաս Բի, ԹՄԽ - tbi@dst.dk, tel. 00374-95-595-394 or 0045-4119-8710
Անահիտ Սաֆյան, ԹՄԽ գործընկեր - info@armstat.am, tel. 000374-10-589-545
Դիանա Գասոյան, ԹՄԽ օգնական - dgasoyan@yahoo.com
Լիանա Աթոյան, ԹՄԽ թարգմանչուհի - alia7a@yahoo.com